ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 07-Ա/Ք «15 » 01 2016 թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ՝ «ՄԵԿ ԵՐԵԽԱ՝ ՄԵԿ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ» ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ <<ԱՐՄԹԱԲ>> ՊԼԱՆՇԵՏՆԵՐԻ ԳՆՄԱՆ, ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 9-ի նիստի N 15 արձանագրային որոշումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի առաջին դասարանի սովորողներին անվճար համակարգիչ տրամադրելու՝ «Մեկ երեխա՝ մեկ համակարգիչ» ծրագրի փորձնական փուլի շրջանակներում <<Արմթաբ>> պլանշետների գնման, բաշխման և շահագործման ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:

՚՚՚՚՚ ՚՚՚՚՚

Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2016 թվականի 07- Ա/Ք հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ՝ «ՄԵԿ ԵՐԵԽԱ՝ ՄԵԿ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ» ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

<<ԱՐՄԹԱԲ>> ՊԼԱՆՇԵՏՆԵՐԻ ԳՆՄԱՆ, ԲԱՇԽՄԱՆ և ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են ՀՀ Վայոց Ձորի մարզի առաջին դասարանի սովորողներին անվճար համակարգիչ տրամադրելու՝ «Մեկ երեխա՝ մեկ համակարգիչ» փուլային ծրագրի (այսուհետ՝ Ծրագրի) շրջանակներում <<Արմթաբ>> պլանշետների գնման, բաշխման ու շահագործման գործընթացները:
2. Ծրագրի շրջանակներում <<Արմթաբ>> պլանշետների գնման, բաշխման ու շահագործման գործընթացները համակարգվում են <<Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի>> (այսուհետ՝ ԴՏՀՏՇՀ) կողմից:
3. <<Արմթաբ>> պլանշետների (այսուհետ՝ պլանշետներ) գնումն իրականացվում է ԴՏՀՏՇՀ -ի կողմից՝ Ծրագրով նախատեսված գումարներով:
4. Յուրաքանչյուր տարվա մինչև մայիսի 30-ը ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանը ՀՀ կրթության և գիտության նախարարություն և ԴՏՀՏՇՀ է ներկայացնում հաջորդ ուսումնական տարվա առաջին դասարանցիների և դասվարների կանխատեսվող թվաքանակները՝ ըստ մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների

(այսուհետ՝ հաստատություններ): Տրված տվյալների հիման վրա ԴՏՀՏՇՀ -ն ձևավորում է գնման ենթակա պլանշետների բանակները և իրականացնում դրանց գնման գործընթացը:

5. Յուրաքանչյուր տարվա մինչև սեպտեմբերի 15-ը ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանը ՀՀ կրթության և գիտության նախարարություն և ԴՏՀՏՇՀ է ներկայացնում տվյալ ուսումնական տարվա առաջին դասարանցիների և դասավարների ճշգրտված թվաքանակները ըստ հաստատությունների՝ բաշխման գործընթացը կազմակերպելու նպատակով:

6. ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանից ստացված տվյալների համաձայն ԴՏՀՏՇՀ-ն պատրաստում է պլանշետների բաշխման ցուցակը և դրանք տրամադրում մատակարար կազմակերպությանը:

7. Մատակարար կազմակերպությունը պլանշետներն առաքում է ՀՀ Վայոց Ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ յուրաքանչյուրին հատկացնելով բաշխման ցուցակում նշված համապատասխան քանակները:

8. Մատակարար կազմակերպության և հանրակրթական դպրոցի միջև ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ:

9. Հաստատությունը.

   1) մատակարար կազմակերպությունից ստանում է պլանշետները հանձնման-ընդունման ակտում նշված քանակների համաձայն.

   2) համապատասխան մասնագետի մասնակցությամբ ստուգում է պլանշետների անվնաս ու սարքին լինելը և դրանց համապատասխանությունը հանձնման-ընդունման ակտում նշված տեխնիկական բնութագրիչներին: Ֆիզիկական վնասվածքներ ունեցող, անսարք և տեխնիկական բնութագրիչներին չհամապատասխանող պլանշետները վերադարձնում է մատակարար կազմակերպությանը՝ դրանք նորով փոխարինելու նպատակով.

   3) ստորագրում է հանձնման-ընդունման ակտը մատակարար կազմակերպության հետ.

   4) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մուտքագրում է ստացված պլանշետները իր հաշվեկշիռ՝ որպես սեփականություն.

5) անհատույց օգտագործման իրավունքով մեկ ուսումնական տարի ժամկետով առաջին դասարանի յուրաքանչյուր սովորողի տրամադրում է մեկ պլանշետ՝ կնքելով պայմանագիր նրա ծնողի (օրինական ներկայացուցչի) հետ՝ համաձայն N1 Ձևի: Պայմանագրում նշվում է սովորողին հատկացվող պլանշետի արտադրական/հերթական համարը, ամրագրվում են կողմերի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև սահմանվում են պլանշետի խափանման, կորստի կամ ֆիզիկական վնասվածքի դեպքում երաշխիքային սպասարկման կամ փոխհատուցման պայմաններն ու պատասխանատուները.

6) անհատույց օգտագործման իրավունքով չորս տարի ժամկետով առաջին դասարանում դասավանդող յուրաքանչյուր դասվարի տրամադրում է մեկ պլանշետ՝ կնքելով պայմանագիր նրա հետ: Պայմանագրում նշվում է դասվարին հատկացվող պլանշետի արտադրական/հերթական համարը, ամրագրվում են կողմերի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև սահմանվում են պլանշետի խափանման, կորստի կամ ֆիզիկական վնասվածքի դեպքում երաշխիքային սպասարկման կամ փոխհատուցման պայմաններն ու պատասխանատուները.

7) յուրաքանչյուր պլանշետի վրա փակցնում է այն սովորողի կամ ուսուցչի անուն ազգանունը, ում հատկացված է տվյալ պլանշետը.

8) ապահովում է, որ սովորողները պլանշետները կանոնավոր կերպով բերեն դպրոց՝ ուսումնական գործընթացում օգտագործելու նպատակով.

9) ուսումնական տարվա ավարտին սովորողներից հետո է հավաքում պլանշետները և ապահովում դրանց պահպանում դպրոցում.

10) յուրաքանչյուր հաջորդ ուսումնական տարվա սկզբին ամեն սովորողի տրամադրում է նախորդ ուսումնական տարում նրան հատկացված պլանշետը՝ կրկին նրա ծնողի (օրինական ներկայացուցչի) հետ կնքելով մեկ ուսումնական տարի ժամկետով անհատույց օգտագործման պայմանագիր կամ երկարաձգում է նախորդ ուսումնական տարում կնքված պայմանագրի ժամկետը մեկ ուսումնական տարով՝ կնքելով համաձայնագիր.

(1) ծրագրի փորձնական փուլի ընթացքում՝ յուրաքանչյուր ուսումնական տարի նոր ընդունված առաջին դասարանցիներին հատակացնում է մատակարար կազմակերպությունից ստացված նոր պլանշետները.

(2) ապահովում է դասվարների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին՝ ուսումնական գործընթացում պլանշետների արդյունավետ օգտագործման նպատակով.

(3) պլանշետների երաշխիքային սպասարկման ժամկետում պահպանում է կապը մատակարար կազմակերպության հետ՝ ի հայտ եկած անսարքությունները վերջինիս կողմից վերացման նպատակով.

(4) Վայոց Ձորի մարզի մեկ հանրակրթական դպրոցից մյուսը սովորողների տեղափոխության դեպքում իրականացվում է պլանշետների փոխանցում՝ հանձնման-ընդունման արձանագրության միջոցով.

(5) սովորողի Վայոց Ձորի մարզից այլ մարզի կամ Երևան քաղաքի դպրոց տեղափոխվելու կամ հանրապետությունից մեկնելու դեպքում ետ է վերցնում պլանշետը սովորողից.

(6) ԴՇՀ-ին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն և հաշվետվություններ՝ պլանշետները սովորողներին տրամադրելու, ուսումնական գործընթացում դրանք օգտագործելու վերաբերյալ՝ Ծրագրի համակարգման և վերահսկման նպատակով:

10. Սույն ընթացակարգով սահմանված կարգով պլանշետները օգտագործվում են սովորողների կողմից 4(չորս) տարի՝ մինչև տարրական դպրոցն ավարտելը:

11. Չորս տարի օգտագործելուց հետո՝ հաստատությունը պլանշետները հանում է իր հաշվեկշռից և տրամադրում է սովորողներին:

N 1 Ձև

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N -----

«ԱՐՇԱԼՈՒՅՍ» ՊԼԱՆՇԵՏԻ ՊԱՐՈՒԱԿԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

-------ՊՈՒԱԿ-ը (այսուհետ՝ Դպրոց) ի դեմս տնօրեն _____ յանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____ յանը (այսուհետ՝ Ծնող) (անձնագիր _____, հասցե՝_____), ով գործում է ելնելով իր երեխա՝ _____ յանի (այսուհետ՝ Երեխա) շահերից, մյուս կողմից, (այսուհետ՝ Դպրոցը և Ծնողը միասին անվանվելով հաճախ «Կողմեր», իսկ առանձին նաև «Կողմ», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀՈՒՄՔԸ.

1. Դպրոցը Երեխայի _____ դպրոցում _____թթ ուսումնական տարիների ընթացքում Երեխայի կողմից ուսումնական և կրթական նպատակներով պլանշետի (այսուհետ՝ Պլանշետ) անհատույց ժամանակավոր օգտագործումն ապահովելու նպատակով Ծնողին անհատույց տիրապետմանն է հանձնում Պլանշետը, իսկ Ծնողը պարտավորվում է ապահովել Պլանշետի նպատակային օգտագործումն իր Երեխայի կողմից և սույն պայմանագրով սահմանված ժամկետում և դեպքերում Դպրոցին վերադարձնել Պլանշետը նույն վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը:
2. Սույն պայմանագրի իմաստով Պլանշետ է հանդիսանում _____ հերթական համարով TSD Wide A1004T մոդելի պլանշետը, որը ներառում է նաև Պլանշետի պաշտպանիչ պատյանը (cover), USB լարը, վերալիցքավորման սարքը (battery charger), որոնք միասին համարվում են Պլանշետի պատկանելիքները:
3. Պլանշետը հանձնվում է Ծնողին իր բոլոր պատկանելիքներով:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ և ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

4. Դպրոցը պատասխանատվություն չի կրում Պլանշետի թերությունների համար:
5. Ծնողը պարտավոր է Պլանշետը պահպանել սարքին վիճակում:
6. Կողմերը սույնով պայմանավորվում են, որ Պլանշետը հանձնելուց հանձման ընդունման ակտի մեջ կնշվի Պլանշետը երաշխիքային սպասարկում իրականացնող ընկերությունում (այսուհետ՝ Ընկերություն) երաշխիքային սպասարկման մեջ գտնվելու ժամկետը (այսուհետ՝ Երաշխիքային ժամկետ): Երաշխիքային սպասարկման պայմանները տրամադրվելու են Պլանշետը արտադրող ընկերության կողմից: Ընդ որում, Երաշխիքային ժամկետը լրանալուց հետո Ծնողը իրավունք ունի սպասարակող ընկերության հետ կնքել նոր երաշխիքային սպասարկման պայմանագիր, որով կսահմանվեն երաշխիքային սպասարկման պայմանները:
7. Պլանշետի թերություններ իր հայտ գալու դեպքում Ծնողը պարտավոր է այն ներկայացնել Դպրոց նշելով առկա թերությունները, որից հետո Դպրոցը կկազմակերպի Պլանշետի երաշխիքային սպասարկումը և արդեն իսկ սպասարկված Պլանշետը իր տիրապետման ներքո լինելու հետո կծանոցի Ծնողին, որպեսզի վերջինս հետ ստանա Պլանշետը և ապահովի դրա նպատակային նշանակությամբ օգտագործումը Երեխայի կողմից:
8. Եթե թերությունները ի հայտ են եկել Երաշխիքայն սպասարկման ժամկետի ավարտից հետո, և Ծնողը չի կնքել Պլանշետի երաշխիքային սպասարման լրացուցիչ պայմանագիր

Ընկերության հետ. ապա Ծնողը պարտավոր է իր միջոցների հաշվին ապահովել ի հայտ եկած թերությունների վերացումը հնարավորինս սեղմ ժամկետներում:

9. Ծնողը իրավունք չունի Պլանշետը հանձնել երրորդ անձի օգտագործմանը, ինչպես նաև պարտավոր է հետևել ,որպեսզի Նրեխան այն չհանձնի երրորդ անձանց օգտագործմանը:

10. Պլանշետը նախատեսված է միայն Նրեխայի կողմից կրթական նպատակներով օգտագործման համար. ուստի Ծնողը պետք է ձեռնպահ մնա և թույլ չտա ընտանիքի անդամների կողմից Պլանշետի օգտագործումը:

11. Ծնողը կրում է Պլանշետի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը, եթե գույքը ոչնչացվել կամ վնասվել է սույն պայմանագրին կամ գույքի նշանակությանն անհամապատասխան օգտագործելու հետևանքով, կամ այն հանձնվել է երրորդ անձի կամ վնասվածքը կամ կորուստը արդյունք են մեխանիկական ներգործության:

12. Պլանշետի պատահական կորստի կամ պատահական այնպիսի վնասվածքի դեպքում. որը Պլանշետը դարձնում է օգտագործման համար ոչ պիտանի Ծնողը պարտավոր է Դպրոցին հատուցել Պլանշետի արժեքը կամ իր ընտրությամբ Պլանշետը արտադրող ընկերությունից ձեռք բերել նույն պլանշետից և այն հանձնել Դպրոցին:

ԴՊՐՈՑԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

13. Դպրոցն իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը, եթե՝

1) Նրեխան Պլանշետը օգտագործել է պայմանագրին կամ Պլանշետի նշանակությանը անհամապատասխան.

2) Ծնողը չի կատարել Պլանշետը պահպանելու իր պարտականությունները.

3) Նրեխան էականորեն վատթարացրել է Պլանշետի վիճակը.

4) Պլանշետը հանձնվել է երրորդ անձի օգատգործման:

5) Նրեխայի այլ Դպրոց տեղափոխվելով կամ ցանկացած այլ դեպքերում, երբ Նրեխան դադարում է Դպրոցի աշակերտ լինելուց.

14. Սույն պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Պլանշետը ենթակա է վերադարձման Դպրոցին

ՊԼԱՆՇԵՏԻ ՀԱՆՁՆՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

15. Պլանշետի հանձնում ընդունումը իրականացվում է Դպրոցի տարածքում Դպրոցի և Ծնողի միջև կնքվող հանձման ընդունման ակտի հիման վրա:

16. Պլանշետի երաշխիքային սպասարկման նպատակով Դպրոցին հանձնելու դեպքում ինչպես նաև արդեն իսկ սպասարկված Պլանշետը Ծնողին վերադարձնելու դեպքում, հանձնում ընդունումը կատարվում է սույն գլխում նախատեսված կարգով:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

17. Սույն Պայմանագիրը կնքվում է 1 տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից:
18. Սույն պայմանագրով չկարգավորվող հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
19. Սույն պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են Կողմերի միջև բանակցություններով. իսկ արդյունքի չհասնելու դեպքում ՀՀ իրավասու դատարանի կողմից:
20. Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական երկու օրինակից. յուրաքանչյուր Կողմին՝ մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՀԱՍՑԵՐԸ